ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

# ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՄԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՀՀ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

---

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МАРКАРЯН МАРИНА АЛЕКСАНДРОВНА

# ТРАНСФОРМАЦИЯ ФУНКЦИОНИРОВАНИЯ ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТИ В ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2026

**Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Քերյան Գարիկ Միշայի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, **Քոչարյան Տիգրան Տոնիկի**
քաղաքական գիտությունների թեկնածու **Արսենյան Մագդա Արմենի**
Առաջատար կազմակերպություն՝ **Ռուս – հայկական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի, մայիսի 25-ին ժամը 15:30 Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:
Հասցեն ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2026 թվականի ապրիլի 22 -ին:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սարգսյան Առնակ Գեորգիի**

---

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете**.
Научный руководитель:
доктор политических наук, проф. **Керян Гарик Мишаевич**
Официальные оппоненты:
доктор политических наук, проф. **Кочарян Тигран Тоникович**
кандидат политических наук **Арсенян Магда Арменовна**
Ведущая организация: **Российско-армянский университет**

Защита состоится 25 мая, 2026г, в 15ч. 30м, на заседании, действующего в ЕГУ специализированного совета 056 «Политология и международные отношения» МОНКС КВОН РА. Адрес: г. Ереван, ул. Алека Манукяна, 1, 0025, РА. С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ. Автореферат разослан 22 апреля, 2026г.

Научный секретарь специализированного совета 056 МОНКС КВОН/РА,

**кандидат политических наук, доцент** Саргсян Арнак Георгиевич

# ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Ժամանակակից քաղաքական համակարգերում գործադիր իշխանությունը հանդես է գալիս որպես պետական իշխանության կազմակերպման առանցքային ինստիտուտ, որի միջոցով ապահովվում է ոչ միայն ընդունված քաղաքական որոշումների իրականացումը, այլև հանրային կառավարման ամբողջ համակարգի ընթացիկ գործառույթների համակարգումը, ռազմավարական նպատակների իրագործումը և պետության շարունակական գործունեությունը: Եթե օրենսդիր իշխանությունը հիմնականում ձևավորում է նորմատիվ-քաղաքական շրջանակները, իսկ դատական իշխանությունը երաշխավորում է իրավական վերահսկողությունը, ապա գործադիր իշխանությունն է այն օղակը, որտեղ քաղաքական կամքը վերածվում է վարչական գործողության, ծրագրերի, ծառայությունների և կառավարչական արդյունքների: Այդ պատճառով ժամանակակից քաղաքական գիտության մեջ գործադիր իշխանության ուսումնասիրությունը վաղուց դուրս է եկել զուտ վարչարարական դիտարկումների սահմաններից և դարձել է քաղաքական ինստիտուտների, իշխանության բաշխման, պետության կարողունակության և կառավարման արդյունավետության վերլուծության առանցքային ուղղություններից մեկը[1]:

Գործադիր իշխանության դերի աճը հատկապես տեսանելի է 21-րդ դարում, երբ պետությունները գործում են բազմաբևեռ և բարձր անորոշությամբ միջավայրում: Գլոբալ տնտեսական փոխկախվածությունը, անվտանգային նոր սպառնալիքները, թվայնացումը, սոցիալական սպասելիքների աճը և ճգնաժամերի արագ տարածումը պետական կառավարման համակարգերից պահանջում են ոչ միայն քաղաքական արձագանքման կարողություն, այլև ինստիտուցիոնալ ճկունություն, արագ ադապտացիա և բարձր կատարողականություն: Այս պայմաններում գործադիր իշխանության արդյունավետությունը այլևս չի սահմանափակվում վարչական հրահանգների կատարմամբ[2]․ այն ներառում է ռազմավարական պլանավորման որակը,

---

[1] Weber, Max. "Economy and society." Democracy: A reader. Columbia University Press, 2016. 247-251. Fukuyama, F., 2013. What is governance? Governance, 26(3), pp.347-368. Peters, B. Guy. The politics of bureaucracy: An introduction to comparative public administration. Routledge, 2018. Rothstein, B. O., & Teorell, J. A. (2008). What is quality of government? A theory of impartial government institutions. Governance, 21(2), 165-190.

[2] Rothstein, B. O., & Holmberg, S. (2014). Correlates of quality of government. Holmberg, S., Rothstein, B., & Nasiritousi, N. (2009). Quality of government: What you get. Annual review of political science, 12(1), 135-161.

միջգերատեսչական համակարգման մակարդակը, հանրային ծառայությունների մատուցման կարողությունը, հաշվետվողականության մեխանիզմների զարգացվածությունը և քաղաքացիների վստահության ձևավորումը: Հետևաբար, գործադիր իշխանության արդյունավետության խնդիրը դառնում է ոչ միայն կառավարման, այլև քաղաքական լեգիտիմության հիմնարար բաղադրիչ[3]:

Ժամանակակից գիտական գրականության մեջ պետական կառավարման վերափոխումների հիմնական փուլերը հաճախ ներկայացվում են դասական բյուրոկրատական մոդելից դեպի New Public Management, ապա՝ դեպի Governance և Good Governance մոտեցումների անցման տրամաբանությամբ: Դասական վեբերյան բյուրոկրատիան շեշտադրում էր հիերարխիան, իրավական կանոնակարգվածությունը և պրոֆեսիոնալ վարչական ապարատը: New Public Management-ը պետական հատված բերեց արդյունքահենության, մրցակցայնության, կատարողական չափման և մենեջերական արդյունավետության սկզբունքները: Իսկ Governance և Good Governance հայեցակարգերը առաջ քաշեցին ցանցային կառավարումը, մասնակցայնությունը, թափանցիկությունը, բազմակենտրոն որոշումների ընդունումը և պետություն–հասարակություն–մասնավոր հատված համագործակցության նոր ձևաչափերը[4]: Այս էվոլյուցիան ցույց է տալիս, որ գործադիր իշխանության արդյունավետությունը մշտապես կախված է ոչ միայն կազմակերպական կառուցվածքից, այլև տվյալ հասարակության քաղաքական միջավայրից, ինստիտուցիոնալ մշակույթից և սոցիալական պահանջներից:

Մի շարք գիտնականներ պետական կառավարման որակը կապում են պետության զարգացման ծեռքբերված արդյունքների հետ՝ ուսումնասիրելով դրանք տնտեսական կայուն աճի (Isham, Kaufmann, Pritchett) պետական

[3] Laegreid, Per, and Tom Christensen, eds. Transcending new public management: the transformation of public sector reforms. Ashgate Publishing, Ltd., 2013. Pollitt, Christopher, and Geert Bouckaert. Public management reform: A comparative analysis-into the age of austerity. Oxford university press, 2017. Lodge, M., & Hood, C. (2012). Into an age of multiple austerities? Public management and public service bargains across OECD countries. Governance, 25(1), 79-101.

[4] Laegreid, P. (2015). Christopher Hood,"A public management for all seasons?", Dickinson, H. (2016). From new public management to new public governance: The implications for a 'new public service'. The Three Sector Solution: Delivering public policy in collaboration with not-for-profits and business, 41, 41-60. Kann-Rasmussen, N. (2024). Reframing instrumentality: from new public management to new public governance. International Journal of Cultural Policy, 30(5), 583-596. Bevir, M. (2011). Governance as theory, practice, and dilemma. The SAGE handbook of governance, 1-16.

ինստիտուտների զարգացվածության (Marshall, Jaggers, Gurr), սոցիալական բարեկեցության մակարդակի (Acemoglu and Robinson) և հանրային քաղաքականության հաջող իրականացման տեսանկյունից[5]: Սակայն այս մոտեցման հիմնական սահմանափակումը կայանում է նրանում, որ այն հաճախ բացահայտում է արդյունավետության հետ փոխկապակցված արդյունքներ, բայց ոչ միշտ է հնարավորություն տալիս հասկանալու, թե ինչպիսի ինստիտուցիոնալ և քաղաքական մեխանիզմների շնորհիվ է ձևավորվում գործադիր իշխանության իրական արդյունավետությունը:

Մեկ այլ ազդեցիկ ուղղություն ձևավորվել է **Good Governance** և **New Public Management** մոտեցումների շրջանակում: Այս հայեցակարգերը շեշտադրում են արդյունքահեն կառավարումը, հաշվետվողականությունը (Hood and Dickson), մրցակցայնությունը, հանրային ծառայությունների որակը, թափանցիկությունը և պետական կառավարման արդիականացումը (Dahlberg, Holmberg)[6]: Դրանց շրջանակում գործադիր իշխանության արդյունավետությունը դիտարկվում է ոչ միայն որպես վարչական կարողություն, այլև որպես պետության ունակություն՝ ապահովելու հանրային պահանջների արձագանքումը, ռազմավարական նպատակների իրականացումը և քաղաքացիների վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ:

Այնուամենայնիվ, նշված ուղղությունները մեծապես կրում են էմպիրիկ բնույթ և հաճախ կենտրոնանում են չափելի ցուցանիշների վրա՝ շրջանցելով «արդյունավետ գործադիր իշխանություն» հասկացության ամբողջական տեսական մեկնաբանությունը: Եթե արդյունավետությունը սահմանափակվում է միայն տնտեսական աճով, ծառայությունների մատուցմամբ կամ առանձին ինդեքսներով, ապա ուշադրությունից դուրս կարող են մնալ քաղաքական համակարգման, ռազմավարական կառավարման, միջգերատեսչական համագործակցության և ինստիտուցիոնալ կայունության հարցերը:

Հենց այդ պատճառով ժամանակակից հետազոտություններում առավել արդիական է դառնում համակցված մոտեցումը, որի համաձայն գործադիր

---

[5] Isham, J., Kaufmann, D., & Pritchett, L. H. (1997). Civil liberties, democracy, and the performance of government projects. The World Bank Economic Review, 11(2), 219-242. Marshall, M. G., Jaggers, K., & Gurr, T. R. (2010). Polity iv project: Political regime characteristics and transitions, 1800-2009. Center for Systemic Peace. Why Nations Fail: The Origins of Power, Prosperity, and Poverty. By Daron Acemoglu and James A. Robinson. New York: Crown Business, 2012

[6] Dahlberg, S., & Holmberg, S. (2014). Democracy and bureaucracy: How their quality matters for popular satisfaction. West European Politics, 37(3), 515-537.

իշխանության արդյունավետությունը պետք է ուսումնասիրվի առնվազն երեք փոխկապակցված մակարդակներում՝

1. **Ինստիտուցիոնալ մակարդակ** – պետական մարմինների կառուցվածքը, լիազորությունների բաշխումը, իրավական կայունությունը, համակարգման մեխանիզմները, հաշվետվողականության համակարգը:

2. **Ռազմավարական մակարդակ** – կառավարության կարողությունը ձևավորելու երկարաժամկետ նպատակներ, իրականացնելու բարեփոխումներ, արձագանքելու ճգնաժամերին և ապահովելու պետական քաղաքականության հետևողականություն:

3. **Օպերացիոնալ մակարդակ** – կառավարման ամենօրյա գործընթացների արդյունավետությունը, վարչարարության որակը, թվայնացումը, ծառայությունների մատուցման արագությունն ու հասանելիությունը:

Սկզբունքորեն այլ մոտեցում է կիրառվում այն աշխատություններում, որոնք հիմնվում են արդյունավետության տնտեսական մեկնաբանության վրա: Այստեղ արդյունավետությունը հասկացվում է որպես ռեսուրսների և արդյունքների հարաբերակցություն, նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքի ապահովում կամ նպատակների իրագործման աստիճան[7]: Թեև այս մոտեցումը կարևոր է պետական կառավարման գնահատման համար, այն ինքնին բավարար չէ քաղաքական համակարգի համատեքստում գործադիր իշխանության արդյունավետությունը հասկանալու համար, քանի որ պետական իշխանության հաջողությունը չափվում է ոչ միայն ծախսերով ու արդյունքներով, այլև լեգիտիմությամբ, կայունությամբ, վստահությամբ և քաղաքական պատասխանատվությամբ:

Այսպիսով, գործադիր իշխանության արդյունավետության ուսումնասիրությունը պահանջում է ոչ թե մեկ ցուցանիշի կամ մեկ տեսության կիրառություն, այլ բազմաչափ վերլուծական շրջանակ, որը թույլ կտա գնահատել պետական կառավարման իրական կարողունակությունը ժամանակակից քաղաքական համակարգում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության պայմաններում: Միևնույն ժամանակ, ժամանակակից գիտական գրականության մեջ բացակայում է գործադիր իշխանության արդյունավետության միասնական և համընդհանուր սահմանումը: Գոյություն ունեցող մոտեցումները հաճախ կենտրոնանում են առանձին ցուցանիշների՝ տնտեսական աճի, կառավարման

[7] Hooghe, L., & Marks, G. (2009). Does efficiency shape the territorial structure of government?. Annual Review of political science, 12(1), 225-241.

որակի, ծառայությունների մատուցման կամ ինստիտուցիոնալ զարգացման վրա, սակայն չեն ապահովում երևույթի ամբողջական բացատրություն: Այս հանգամանքը պայմանավորում է համակցված վերլուծական շրջանակի անհրաժեշտությունը, որի հիմքում դրվում են գործադիր իշխանության ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ մակարդակների փոխկապակցված ուսումնասիրությունը:

Այս գործընթացները առանձնահատուկ նշանակություն ունեն հետխորհրդային պետությունների համար, որտեղ պետական ինստիտուտների ձևավորումը տեղի է ունեցել համակարգային անցման, քաղաքական վերադասավորումների և հաճախ՝ անկայուն ժողովրդավարական զարգացման պայմաններում: Հետխորհրդային տարածքում գործադիր իշխանությունը շատ դեպքերում ժառանգել է կենտրոնացված վարչական կառավարման ավանդույթներ, սակայն միաժամանակ ստիպված է եղել հարմարվել նոր սահմանադրական կարգերին, շուկայական տնտեսության պահանջներին և ժողովրդավարական հաշվետվողականության սկզբունքներին: Արդյունքում, այս երկրների համար գործադիր իշխանության բարեփոխումների հարցը վերածվել է ոչ միայն վարչական արդիականացման, այլև պետականաշինության և քաղաքական ինստիտուցիոնալացման հիմնարար խնդրի[8]:

Հայաստանի Հանրապետությունում անկախությունից ի վեր պետական կառավարման համակարգի զարգացումն ուղեկցվել է մի շարք ինստիտուցիոնալ, սահմանադրական և վարչական վերափոխումներով, որոնք ուղղված են եղել պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը և պետական ինստիտուտների արդիականացմանը: Կառավարման մոդելի փոփոխությունները, նախարարական համակարգի վերակազմավորումները, տարածքային կառավարման բարեփոխումները, թվայնացման գործընթացները, հանրային ծառայությունների մատուցման նոր գործիքների ներդրումը, ինչպես նաև սահմանադրական փոփոխություններով պայմանավորված իշխանության ճյուղերի հարաբերակցության վերաիմաստավորումը ցույց են տալիս, որ գործադիր իշխանության խնդիրը Հայաստանի քաղաքական զարգացման առանցքային հարցերից մեկն է: Հատկապես վերջին տասնամյակներում ակնհայտ է դարձել, որ գործադիր իշխանության արդյունավետությունը կախված

[8] Levitsky, Steven, and Lucan A. Way. Competitive authoritarianism: Hybrid regimes after the Cold War. Cambridge University Press, 2010., Holmberg, Sören, and Bo Rothstein, eds. Good government: The relevance of political science. Edward Elgar Publishing, 2012. Park, D.W., 2009. Government speech and the public forum: A clash between democratic and egalitarian values. Gonz. L. Rev., 45, p.113.

է ոչ միայն իրավական լիազորություններից, այլև ռազմավարական կառավարման որակից, քաղաքական պատասխանատվությունից, ինստիտուցիոնալ կայունությունից և հասարակական վստահությունից:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գործադիր իշխանության ինստիտուցիոնալ զարգացումը և դրա գործունեության արդյունավետությունը ուղղակիորեն ազդում են քաղաքական համակարգի կայունության, պետական կարողունակության և հանրային քաղաքականության արդյունքների վրա: Թույլ կամ մասնատված գործադիր իշխանությունը կարող է հանգեցնել որոշումների ուշացման, համակարգային անկայունության, ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման և պետական ինստիտուտների նկատմամբ վստահության նվազման: Ընդհակառակը, արդյունավետ կազմակերպված և ռազմավարականորեն կողմնորոշված գործադիր իշխանությունը նպաստում է պետական քաղաքականության հետևողական իրականացմանը, հանրային խնդիրների լուծմանը, ճգնաժամերի կառավարմանը և պետություն–հասարակություն կառուցողական փոխգործակցության խորացմանը: Ուստի գործադիր իշխանության գործունեության ուսումնասիրությունը, դրա արդյունավետության չափանիշների սահմանումը և բարելավման մեխանիզմների բացահայտումը ունեն ոչ միայն տեսական, այլև կարևոր կիրառական նշանակություն Հայաստանի Հանրապետության քաղաքական զարգացման համատեքստում:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության **օբյեկտը** ՀՀ գործադիր իշխանության ինստիտուտն է՝ որպես պետական իշխանության գործառնական բաղադրիչ և պետություն–հասարակություն փոխազդեցության համակարգ:

Հետազոտության **առարկան՝** ՀՀ գործադիր իշխանության ինստիտուտի ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ բաղադրիչների փոխազդեցությունն է՝ պետական-քաղաքական կառավարման արդյունավետության համատեքստում:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Ուսումնասիրության նպատակն է՝ բացահայտել և վերլուծել Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության ինստիտուտի արդյունավետության ձևավորման ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ հիմքերը՝ գնահատելով դրանց փոխազդեցությունը պետական-քաղաքական կառավարման համատեքստում:

**Հետազոտության խնդիրներն են՝**

- Ուսումնասիրել պետության գործադիր իշխանության ինստիտուտի գենեզիսը և դրա մասին տեսական պատկերացումների զարգացումը:
- Վերլուծել գործադիր իշխանության ոլորտի գիտական ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական մոտեցումների էվոլյուցիան:
- Ձևակերպել և հիմնավորել գործադիր իշխանության արդյունավետության ուսումնասիրության համակցված տեսական-մեթոդաբանական շրջանակ՝ ներառելով ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ մակարդակների վերլուծությունը:
- Իրականացնել «պետական իշխանության արդյունավետություն» հասկացության հայեցակարգայնացում՝ պետություն–հասարակություն փոխազդեցության համատեքստում:
- Ձևակերպել գործադիր իշխանության արդյունավետության օպերացիոնալ սահմանում և բացահայտել օպերացիոնալ գործիքակազմի դերը պետական-քաղաքական կառավարման արդյունավետության ապահովման մեջ:
- Մշակել ՀՀ գործադիր իշխանության արդյունավետության գնահատման էմպիրիկ մեթոդաբանություն՝ հիմնված քանակական և համեմատական ցուցանիշների կիրառման վրա:
- Վերլուծել ՀՀ գործադիր իշխանության արդյունավետության դինամիկան (2000–2024 թթ.)՝ միջազգային և ազգային տվյալների հիման վրա:
- Բացահայտել քաղաքական համակարգի բնութագրերի և գործադիր իշխանության արդյունավետության միջև փոխկապակցությունները՝ համեմատական դիտանկյունից:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքը կազմում են քաղաքական ինստիտուտների, հանրային կառավարման և պետական կառավարման արդյունավետության ուսումնասիրությանը նվիրված գիտական աշխատությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, ինստիտուցիոնալ և համեմատական վերլուծության մեթոդները:

Հետազոտության արդյունքում ստացված **գիտական նորույթը** կարելի է ամփոփել հետևյալ հիմնադրույթներով.

**Առաջին**՝ մշակվել է գործադիր իշխանության արդյունավետության տեսա-մեթոդաբանական շրջանակ՝ նեոինստիտուցիոնալ և համակարգային մոտեցումների սինթեզի հիման վրա: Ի տարբերություն գոյություն ունեցող մոտեցումների, որոնք կենտրոնացած են կա՛մ նորմատիվ, կա՛մ զուտ

տնտեսագիտական գնահատականների վրա, առաջարկած մոտեցումը ինտեգրում է պետությունը և հասարակությունը որպես միասնական համակարգ:

**Երկրորդ**՝ ձևակերպվել է գործադիր իշխանության արդյունավետության օպերացիոնալ, տեսականորեն հիմնավորված սահմանումը, որն ունի և՛ տեսական խստություն, և՛ էմպիրիկ կիրառելիություն:

**Երրորդ**՝ մշակվել է արդյունավետության չափման *բազմաչափանիշային էմպիրիկ մեթոդաբանություն*, որն ինտեգրում է համակարգերի տեսությունը, նեոինստիտուցիոնալ վերլուծությունը և պատմա-համեմատական մեթոդները: Մեթոդաբանության առանձնահատկությունը նրա ադապտացվելու հնարավորությունն է տարբեր քաղաքական համատեքստերում:

**Չորրորդ**՝ առաջին անգամ համակարգային կերպով վերլուծվել է Հայաստանի վարչական բարեփոխումների էվոլյուցիան՝ ավանդական բյուրոկրատական համակարգից *New Public Management*-ին, ապա *Good Governance* մոդելին անցումը, ցույց տալով, թե ինչպես են միջազգային մոդելները հարմարվում տեղական քաղաքական մշակույթին և ինստիտուցիոնալ ժառանգությանը:

**Հինգերորդ**՝ տեսականորեն հիմնավորվել և էմպիրիկորեն ապացուցվել է օպերացիոնալ գործիքակազմի՝ էլեկտրոնային կառավարման, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների, մոնիտորինգի համակարգերի որոշիչ դերը գործադիր իշխանության արդյունավետության բարձրացման գործում:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պետական կառավարման համակարգի բարեփոխումների գործընթացում, ինչպես նաև օգտագործվել քաղաքական գիտության և հանրային կառավարման ոլորտում հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.**

1. Գործադիր իշխանությունը հանդիսանում է պետական կառավարման առանցքային ինստիտուցիոնալ տարրերից մեկը:

2. Գործադիր իշխանության արդյունավետությունը «պետություն–հասարակություն» համակարգի օբյեկտիվ բնութագիրն է, որն արտահայտում է գործադիր իշխանության մարմինների կարողությունը՝ կառավարելու բնակչությանը հանրային բարիքների տրամադրման գործընթացը, ապահովելու պետական ինստիտուտների արդյունավետ գործունեությունը և հասնելու հասարակական նշանակություն ունեցող արդյունքների:

3. Պետական կառավարման արդյունավետության գնահատումը պահանջում է համալիր տեսական մոտեցում:

4. Հայաստանի Հանրապետությունում կառավարման արդյունավետության բարձրացումը պահանջում է ինստիտուցիոնալ և վարչական բարեփոխումների համադրություն:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները քննարկվել են ԵՊՀ հասարակագիտական ուղղությունների կրթական ծրագրերում («Հանրային կառավարում», «Քաղաքագիտություն») կազմակերպված դասընթաց-քննարկումների շրջանակում, ինչպես նաև Բուխարեստի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետում՝ ERASMUS+ Teaching Mobility շարժունության շրջանակում, և արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում, որոնք տպագրվել են ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական պարբերականներում,

**Ատենախոսության կառուցվածքը:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### Գլուխ 1. Գործադիր իշխանության ինստիտուտի և դրա մասին տեսական պատկերացումների ծագումնաբանությունը

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է գործադիր իշխանության ինստիտուտի ձևավորման և դրա վերաբերյալ տեսական պատկերացումների զարգացման ուսումնասիրությանը: Գլխում վերլուծվում են իշխանության բնույթի և կառուցվածքի վերաբերյալ քաղաքական գիտության մեջ ձևավորված հիմնական մոտեցումները, ինչպես նաև բացահայտվում է գործադիր իշխանության ինստիտուտի ձևավորման պատմական և տեսական գործընթացը: Ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու այն տեսական և ինստիտուցիոնալ հիմքերը, որոնց վրա ձևավորվել է ժամանակակից պետական կառավարման համակարգը և որոնց շրջանակում գործադիր իշխանությունը ձեռք է բերել իր առանձնահատուկ դերակատարությունը քաղաքական համակարգում:

Վերլուծությունը սկսվում է իշխանության երևույթի տեսական մեկնաբանությունների ուսումնասիրությամբ: Քաղաքական գիտության մեջ

իշխանությունը դիտարկվում է որպես սոցիալական հարաբերությունների այնպիսի ձև, որի միջոցով ապահովվում է հասարակության կազմակերպումը և կառավարման գործընթացների իրականացումը: Այդ համատեքստում ներկայացվում են իշխանության վերաբերյալ տարբեր տեսական մոտեցումներ, որոնք ձևավորվել են քաղաքական մտքի զարգացման տարբեր փուլերում: Քննարկվում են այն տեսությունները, որոնք իշխանությունը դիտարկում են որպես սոցիալական կարգավորման մեխանիզմ, ինչպես նաև այն մոտեցումները, որոնց շրջանակում իշխանությունը ներկայացվում է որպես քաղաքական համակարգի կառուցվածքային տարր:

Այդ տեսական քննարկումների շրջանակում հատուկ ուշադրություն է դարձվում քաղաքական իշխանության կառուցվածքային տարրերին և դրանց փոխհարաբերություններին: Նշվում է, որ քաղաքական իշխանությունը հանդես է գալիս որպես պետական կառավարման կազմակերպման հիմնական մեխանիզմ, որի միջոցով իրականացվում է քաղաքական որոշումների ընդունումը և դրանց իրականացումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Այդ առումով իշխանությունը դիտարկվում է ոչ միայն որպես քաղաքական համակարգի կառուցվածքային բաղադրիչ, այլ նաև որպես հասարակական հարաբերությունների կարգավորման հիմնական գործիք:

Իշխանության բնույթի ուսումնասիրությունից հետո ուշադրությունը կենտրոնացվում է իշխանությունների տարանջատման տեսության վրա, որը կարևոր դեր է ունեցել ժամանակակից պետական կառավարման համակարգերի ձևավորման գործընթացում: Նշվում է, որ իշխանությունների տարանջատման գաղափարը ձևավորվել է քաղաքական մտքի զարգացման ընթացքում և դարձել է ժամանակակից ժողովրդավարական պետությունների կառավարման համակարգի հիմնարար սկզբունքներից մեկը: Այդ տեսության շրջանակում պետական իշխանությունը բաժանվում է երեք հիմնական ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների, որոնց միջև հաստատվում են փոխզսպման և հակակշիռների մեխանիզմներ:

Վերլուծության ընթացքում քննարկվում են իշխանությունների տարանջատման տեսության դասական մեկնաբանությունները, որոնք ներկայացված են Ջոն Լոկի և Շառլ Լուի Մոնտեսքյոյի աշխատություններում: Նշվում է, որ այդ հեղինակների գաղափարները զգալի ազդեցություն են ունեցել պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորման վրա և դարձել են ժամանակակից սահմանադրական պետությունների կառավարման համակարգի տեսական հիմքը: Այդ

համատեքստում բացահայտվում է գործադիր իշխանության ինստիտուցիոնալ առանձնահատկությունը՝ որպես պետական իշխանության այն ճյուղի, որը պատասխանատու է օրենքների իրականացման և պետական քաղաքականության իրականացումը կազմակերպելու համար:

Գլխում նաև ուսումնասիրվում է գործադիր իշխանության ինստիտուտի ձևավորման և զարգացման գործընթացը ժամանակակից քաղաքական համակարգերում: Նշվում է, որ գործադիր իշխանությունը հանդիսանում է պետական կառավարման համակարգի կենտրոնական տարրերից մեկը, քանի որ հենց այդ իշխանության միջոցով է ապահովվում պետական քաղաքականության իրականացումը և պետական կառավարման համակարգի գործառույթների իրականացումը: Գործադիր իշխանությունը հանդես է գալիս որպես քաղաքական որոշումների իրականացման հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմ և ապահովում է պետական կառավարման համակարգի գործառնական գործունեությունը:

Այս համատեքստում ուշադրություն է դարձվում նաև գործադիր իշխանության ինստիտուտի ուսումնասիրության ժամանակակից մոտեցումներին: Քաղաքական գիտության մեջ գործադիր իշխանությունը հաճախ դիտարկվում է ինստիտուցիոնալ վերլուծության շրջանակում, որի միջոցով հնարավոր է բացահայտել քաղաքական ինստիտուտների կառուցվածքը, դրանց փոխգործակցությունը և դրանց ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Այդ մոտեցման շրջանակում գործադիր իշխանությունը դիտարկվում է որպես ձևավորված կանոնների, նորմերի և կազմակերպական կառուցվածքների ամբողջություն, որոնք կարգավորում են պետական կառավարման համակարգի գործունեությունը:

Բացի այդ, գլուխը անդրադառնում է նաև գործադիր իշխանության արդյունավետության ուսումնասիրման տեսական նախադրյալներին: Նշվում է, որ գործադիր իշխանության արդյունավետությունը կախված է ինչպես պետական կառավարման համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքից, այնպես էլ քաղաքական որոշումների ընդունման և իրականացման մեխանիզմների արդյունավետությունից: Այդ համատեքստում ընդգծվում է, որ գործադիր իշխանության գործունեության արդյունավետությունը պետք է ուսումնասիրվի ոչ միայն կառավարման գործընթացների կազմակերպման տեսանկյունից, այլ նաև քաղաքական համակարգի ընդհանուր արդյունավետության շրջանակում:

Այսպիսով, առաջին գլուխը ձևավորում է հետազոտության տեսական հիմքը և հնարավորություն է տալիս բացահայտել գործադիր իշխանության ինստիտուտի ձևավորման և զարգացման հիմնական օրինաչափությունները: Իրականացված տեսական վերլուծությունը հիմք է ստեղծում պետական կառավարման արդյունավետության վերաբերյալ ժամանակակից մոտեցումների ուսումնասիրության համար, որը ներկայացվում է ատենախոսության երկրորդ գլխում:

## Գլուխ 2. Պետական կառավարման արդյունավետության մասին ժամանակակից պատկերացումները

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է պետական կառավարման արդյունավետության վերաբերյալ ժամանակակից գիտական պատկերացումների ուսումնասիրությանը: Գլխում վերլուծվում են պետական կառավարման արդյունավետության գնահատման տեսական և մեթոդաբանական մոտեցումները, ինչպես նաև ներկայացվում են այն հիմնական ուղղությունները, որոնց շրջանակում զարգացել է պետական կառավարման համակարգերի արդյունավետության ուսումնասիրությունը ժամանակակից քաղաքական գիտության մեջ:

Գլխի սկզբում անդրադարձ է կատարվում պետական կառավարման արդյունավետության հասկացության տեսական մեկնաբանություններին: Նշվում է, որ պետական կառավարման արդյունավետությունը հանդիսանում է բազմաչափ երևույթ, որը ներառում է ինչպես կառավարման ինստիտուտների գործունեության արդյունքները, այնպես էլ պետական քաղաքականության իրականացման արդյունավետությունը: Այդ համատեքստում պետական կառավարման արդյունավետությունը դիտարկվում է որպես այն կարողությունը, որով պետական կառավարման համակարգը կարողանում է ապահովել հասարակության զարգացման նպատակների իրականացումը և հանրային շահերի պաշտպանությունը:

Վերլուծության ընթացքում ներկայացվում են պետական կառավարման արդյունավետության ուսումնասիրման հիմնական գիտական մոտեցումները:

